

ՈՒՍՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ ԴԷՊԻ ՌԱՄԼԷԻ ՍՈՒՐԲ ԴԷՈՐԳ ՎԱՆՔԸ

Ինչպես աշխարհի շատ կրօններ, այնպես էլ Քրիստոնեությունը ներմուծել է ուխտաւորութեան վաղեմի սովորութիւնը: Իւրաքանչիւր հաւատացեալի համար փափաք է այցելել եւ հաղորդակից լինել այն վայրերին, որոնք կապուած են տուեալ կրօնի հիմնադրի կամ այդ կրօնի երեւելի դէմքերի հետ: Ուխտաւորներն աղօթում են այդ վայրերում եւ ներշնչոււմ են դրանցից:

Ուխտագնացութիւնը դէպի սրբավայրեր ունի զուտ կրօնական նպատակ եւ եթէ այն զերծ լինէր այդպիսի նպատակից կը վերածուէր պարզ նամբորդութեան՝ զուրկ հոգեւոր արժանիից:

Ուխտագնացութեան առաջին օրինակներին՝ հանդիպում ենք ինչպես Նոր, այնպես էլ Հին Կտակարանում:

Հին Կտակարանը պատմում է ամուլ Աննայի՝ սրբավայրում կատարած ջերմ աղօթքի մասին, որի համաձայն մի տարի անց Աստուած նրան շնորհում է մի զաւակ, որին կոչում են Սամուէլ: Ի նշան երախտագիտութեան կինն ուխտում է որդուն նուիրել Աստծուն:

Նոր Կտակարանից յայտնի է տասներկուամեայ Յիսուսի, իր ծնողների հետ Երուսաղէմ կատարած ուխտագնացութիւնը:

Մեզ՝ հայերիս համար, ուխտագնացութիւնը կարեւոր նշանակութիւն ունի նաեւ ազգային տեսակէտից, քանզի աշխարհով մէկ սփռուած հայերը առիթ են ունենում ի մի հաւաքուել տարբեր երկրներից կամ քաղաքներից:

Վերջերս այսպիսի գեղեցիկ առիթ էր ընծանուած Իսրայէլի հայութեանը, կատարելու ուխտագնացութիւն Ռամլէի Սուրբ Դէորգի անունը կրող վանքը, Գերաշնորհ Տէր Արիս Եպս. Ի հոգեւոր հայրերի գլխավորութեամբ:

Այս վանքի մասին պատմութիւնը քաւարար տեղեկութիւններ չի հաղորդում: Նոյնիսկ յայտնի չէ վանքի կառուցման ստույգ թուականը: Միայն ենթադրելի է, որ այն կառուցուել է 1600ականներին եղիազար Պատրիարքի օրով:

Յիշատակութիւններ են պահպանուել Հաննէ (Յովհաննէս) պատմիչից, որը գրում է. «Գոյ աստ վանք մի ազգիս մերոյ յանուն Սրբոյն Դէորգայ զօրավարին, եւ երանեալ մեծ մարտիրոսի, զփոքրիկ եւ զգեղեցիկ ունելով գեկեղեցի հանդերձ քարձրաբերձ դարպասօք եւ խցերովք, եւ ունի տնտեսատուն, փուռ, սեղանատուն, գինեւոց եւ պարտէզ իլիմն ծառօք: Բնակին աստ միարանք, եւ աստ իջեւանին տէրունական ուխտաւորն, զի յայն եւ ընդարձակ ունի ատեան, որոց շինողաց եւ պատնառ իրնողաց՝ մամաւանդ եղիազար Կաթողիկոսին՝ եւ այժմ շէն պահողաց, Տէր Քրիստոս ողորմեսցի. ամէն»:

Ուրեմն, այստեղ են իջեւանել Յոպպէից Երուսաղէմ գնացող ուխտաւորները նախապարհի երկարութեան պատճառով:

Հետաքրքրական է այն փաստը, որ այս վանքում է առաջին անգամ հիմնուել Ժառանգաւորաց Վարժարանը 1842ին, Յունիսի 25ին Զաւարիա Պատրիարքի օրով:

Վանքի մասին յիշատակութիւններ են պարունակում պատրիարքների եւ ուխտաւորների վանքին նուիրած կալուածների եւ ընծաների յիշատակարանները:

Տարիներ շարունակ վանք են այցելել հարիւրաւոր ուխտաւորներ, սակայն ուխտագնացութիւնները գրեթէ դադարել են 1927 թուականին Ռամլէում տեղի ունեցած երկրաշարժի պատճառով, որի ժամանակ վանքը ենթարկուել է մասնակի աւերումների: 1981 թուականին ուխտագնացութեան սովորոյթը վերականգնուել է եւ կատարոււմ է մինչեւ օրս:

Օրեր առաջ վանքը վերստին լեցուն էր ուխտաւորների քաղմութեամբ: Մատուցուեց Սուրբ Պատարագ, որի երգեցողութեանն էին երգակցում ներկաներից շատերը: Պատարագի Հայր Նորայրի պատրաստած քաղմով ժողովուրդն առիթ ունեցաւ եւս մէկ անգամ լսելու Սուրբ Դէորգի նահատակութեան պատմութիւնը եւ հաղորդակից լինելու Սուրբի չարչարաններին: Պատարագի վերջում կատարուեց Հոգեհանգստեան Պաշտօն, եւ քաղմաբի հաւատացեալներ իրենց ննջեցեալների հոգիների փրկութիւնը խնդրեցին «Տէր Ողորմեայի» հոգեպարար երաժշտութեան ներքոյ: Պատարագից յետոյ քալում հաւաքուած խումբ-խումբ ուխտաւորները սրտի ցաւով էին խօսում վանքի ներկայիս անմխիթար վիճակի մասին, սակայն նրանք լցուած էին լաւատեսութեամբ եւ յոյս ունէին՝ տեսնել վանքը քարեկարգ վիճակում:

Այնուհետեւ ուխտաւորները դժուարութեամբ քաժանուեցին եկեղեցուց, իրենց հետ տանելով հաճելի յուշեր:

Ժառանգաւոր Սամուէլ Սաֆարեան